



**«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն**

15 հուլիս, 2011, Երևան

**ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ**

**Ֆորբս ամսագրի բլոգում հրապարակված վարկանիշի վերաբերյալ**

*Հրապարակումը հակասական արձագանքների տեղիք տվեց հասարակության տարբեր շերտերում: Որպես անկախ հետազոտական կենտրոն ներկայացնում ենք Ֆորբս ամսագրի բլոգում ներկայացված վարկանիշի վերաբերյալ մեր վերլուծականը:*

Տնտեսության վարկանիշավորումը մի շարք սկզբունքների վրա հիմնվող գործընթաց է, որոնց պահպանմամբ է կանխորոշվում վարկանիշային վերլուծության որակը: Մասնավորապես, հստակ ձևակերպվում է, թե ինչն է ենթակա վարկանիշավորման և սահմանվում է վարկանիշավորման առարկան համապարփակ բնութագրող բոլոր էական գործոնների համախումբը: Վարկանիշավորման որակը կախված է նաև բոլոր գործոնների ճշգրիտ քանակական գնահատական տալու մեթոդաբանությունից: Վերջինս ինչքան շատ է հիմնվում քանակապես չափելի փաստերի վրա, այնքան ապահովվում է գնահատականի բարձր որակ:

Այս տեսանկյունից Ֆորբսի վարկանիշային վերլուծությունը հավակնում է չափելու տնտեսության «վատը» լինելու աստիճանը: Վերջինս տնտեսագիտական սահմանում չունեցող գնահատական է:

Հողվածագրից ստացած մեր տվյալներով՝ նշված վարկանիշը կառուցված է հետևյալ ցուցանիշների գնահատման հիման վրա.

Ցուցանիշ	Կշիռը վարկանիշային գնահատականում
ՀՆԱ աճի տեմպ	40%
Մեկ շնչին ընկնող անվանական ՀՆԱ	20%
Գնաձ	30%
Ընթացիկ հաշվի հաշվեկշիռ	10%

Ըստ էության, սրանք հիմնական մակրոտնտեսական պարամետրեր են: Հաշվարկներում հեղինակն օգտագործել է դրանց 2009-2012թթ. միջին ցուցանիշները:

Կանխատեսվող ցուցանիշները (2011-2012թթ.) բավականին մեծ դեր ունեն ընդհանուր գնահատականում, այնինչ ամենատարածված վարկանիշավորման մեթոդաբանություններում ավելի մեծ կշիռ է տրվում փաստացի ցուցանիշներին, քանի որ կանխատեսումներն ունեն ճշգրտության ավելի ցածր մակարդակ:

Վարկանիշի կազմման հաջորդ էական գործոնն առանձին ցուցանիշների կշիռն է ընդհանուրի մեջ: Այս կամ այն ցուցանիշը մեծ կշռով ընդհանուրի մեջ դիտարկելն էական ազդեցություն կարող է ունենալ պատկերի վրա, և կշիռները սովորաբար պատահականորեն չեն կիրառվում: Մասնավորապես, շատ վարկանիշավորումներում տարբեր ենթացուցիչների կշիռները որոշվում են՝ ելնելով վարկանիշավորման առարկայի վրա դրանց ազդեցության մակարդակների էկոնոմետրիկ և այլ վերլուծություններից: Բացի այդ, ընդհանուր ցուցիչների կշիռների կազմման ժամանակ հաշվի է առնվում նաև տնտեսության զարգացման մակարդակը:

Ֆորբսի վարկանիշում ամենամեծ կշիռը տրված է ՀՆԱ աճի տեմպին (40%): Նման տրամաբանությամբ, եթե Ֆորբսը հայտարարեր աշխարհի 10 ոչ թե վատագույն, այլ լավագույն տնտեսությունները, ապա Աֆղանստանը, որը վերջին երկու տարիներին բարձր աճ է գրանցել, կգբաղեցներ առաջատար դիրքերից մեկը, մինչդեռ այն աշխարհի ամենաաղքատ երկրներից է և ունի Հայաստանից մոտ 5 անգամ ցածր բարեկեցության մակարդակ:

Հայաստանի տնտեսական աճը 2003-2007թթ. եղել է բավականին բարձր և միջին գնահատականով աշխարհում 10-րդ դիրքն է գրավել: Նմանատիպ մոտեցման պարագայում այդ տարիներին Հայաստանի տնտեսությունը պետք է համարվեր աշխարհի «լավագույններից» մեկը (ըստ մեր հաշվարկների տվյալ վարկանիշով առաջին տասնյակում կներառվեր): Մինչդեռ, Հայաստանում հենց մինչձգնաժամային տարիներին կուտակված կառուցվածքային հիմնախնդիրների հետևանքով է հիմնականում, որ տնտեսությունը նման սուր անկում ապրեց ձգնաժամի ազդեցության ներքո: Տնտեսական քաղաքականության և բիզնեսի կողմից ձեռնարկած քայլերի արդյունքները սովորաբար ի հայտ են գալիս մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների փոփոխության տեսքով որոշակի ժամանակային տարբերությամբ (լագով): Վարկանիշում միայն արդյունքային ցուցանիշների ներառման դեպքում նշված ժամանակային լագի էֆեկտն անտեսվում է:

Միջազգային վարկանիշավորումների դերը կարևոր է երկրի տնտեսական իրավիճակի օբյեկտիվ և համակողմանի գնահատման հարցում: Միաժամանակ, միջազգայնորեն ձանաչված կառույցների կողմից վարկանիշային ցուցանիշներն էական ազդեցություն են թողնում երկրների վարկանիշի և գործարարների շրջանում տվյալ երկրի նկատմամբ կարծիքի ձևավորման վրա: Հետևաբար, նման վարկանիշավորումների իրականացմանը պետք է մոտենալ մեծ պատասխանատվությամբ և առավելագույնս հիմնվել կուռ մեթոդաբանության վրա: Տնտեսական քաղաքականությունը և բիզնեսը պետք է արձագանքեն հեղինակավոր վարկանիշավորումների կողմից բացահայտված հիմնախնդիրներին, եթե դրանք իրականացվել են համապատասխան փորձարկված և միջազգայնորեն ընդունելի մեթոդաբանությամբ և գործիքակազմով:

### ***«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն***

Երևան 0051, Հովսեփ Էմին123

Հեռ. +37410 219740

Էլ-փոստ. [info@ev.am](mailto:info@ev.am)

[www.ev.am](http://www.ev.am)